

IMRE MADÁCH

ՄԱՐԴՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՏԵՍԻԼ Գ.

Դրախտէն դուրս հիանալի երկիր մը: Փայտէ կոշտ եւ փոքրիկ հիւղակ մը. Ադամ ցիցեր կը տնկէ՝ ցանկապատ շինելու համար: Եւս դարպաս շինելու վրայ է: Արուսեակ:

ԱԴԱՄ

Այս հողն իմս է: Տիեզերքի փոխարէն
Պիտի ըլլայ իմ սեփական բնակարանս:
Պիտի պահեմ զաղաններէ աւերիչ,
Պիտի ստիպեմ որ ինձ պըտուղ հայթայթէ:

ԵՒԱ

Ես կը սկսիմ կերտել դարպաս մ'ինձ համար՝
Յար եւ նըման այն երբեմնի եղածին,
Կորած Եդեմն այսպէս մեր մէջ դիւթելու:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ի՞նչ մեծ խօսքեր բերաններէն ձեր ելան:
Ապաղային դոյզ շարժիչներն աշխարհի
Սեփական ինչք եւ ընտանիք պիտ'ըլլան,
Որմէ ամէն վիշտ եւ հաճոյք պիտի ծնին:
Գաղափարներն այս պիտ'աճին անդադար,
Մինչեւ դառնան ճարտարարուեստ, հայրենիք,
Ծընող ամէն ազնիւ ու վսեմ բաներու,
Եւ լափլիզող զաւակներուն հարազատ:

ԱԴԱՄ

Առեղծուածնէ՛ր: Գիտութիւն ինձ խոստացար,
Հրաժարեցայ հաճոյքներէն բընադդի,
Որ թէպէտեւ պայքարով՝ բայց մեծ ըլլամ:
Արդիւնքն ի՞նչ է:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ուրեմն, դուն չե՞ս ըզգար:

ԱԴԱՄ

Կը զգամ, այո՛, թէ զերդ Աստուած զիս թողուց,
Մենութեան մէջ մըղելով զիս ձեռնունայն,
Այնպէս ես ալ զինք թողուցի: Եւ եղայ
Ես ինձ աստուած, ինչ որ պայքարն ինձ կու տայ՝
Իմ արժանիքս է բովանդակ եւ միայն:
Այս է որ ոյժս ու պարծանքս իմ կը կազմէ:

ԱՐՈՒՍԵԱԿ (մեկուսի)

Սի՛ն խամածիկ, կ'արհամարհես երկինքն արդ,
Սիրտդ տեսնենք՝ շարժող շանթեր երբ վառին:
Ձէի դուցէ օղնութեանդ ալ ես կարօտ,
Ուժերս ինքնին արդէն էին բաւական:

ԵՒԱ

Եւ ինձ համար հըսարտութիւն է միայն՝
Թէ համօրէն աշխարհի մայր պիտ'ըլլամ:

ԱՐՈՒՍԵԱԿ (մեկուսի)

Վե՛հ զաղափար ինչ որ կը կրէ սիրտը կնոջ,
Յաւերժութիւն տալու մեղքին, խեղճութեան:

ԱԴԱՄ

Ինչո՞ւ համար ըլլամ Իրեն շնորհակալ.
Մերկ դոյութեան համար արդեօք պարզապէս:
Բայց դոյութիւնն այն թարժանի է որ կրեմ՝
Տառապանքիս եւ յողնութեանս է պըտուղ:
Հաճոյքը դոր կը պարզեւէ ումպ մը ջուր՝
Արժանանալ պէտք եմ կիզիչ ծարաւով,
Գինը ահա քաղցըր մեղրի համբոյրին՝
Վըհաստումն է, դոր կը թողու իրմէ վերջ:
Բայց երբ ամէն երախտիքի կապանքներ
Թօթափեցի, — թէպէտ եղայ ինքնիշխան
Կերտելու իմ ճակատագիրս ու նորէն
Ծըրաղերներս կործանելով խարխափիլ, —
Չաղատեցիր զիս ծանրաբեռն անուրէն,
Որ իմ մարմինս երկրի տիղմին կը կապէ:
Կը զգամ խիղախ հողւոյս առջեւ արդեւք կայ,
Ձեմ զիտեր ի՛նչ, մաղի մը չափ դուցէ նուրբ,
Ուստի եւ ինձ՝ ամօթալի կրկնապէս.
Յատկել կ'ուզեմ, մարմինըս, տե՛ս, կ'իյնայ վար,

Ահանջըս, աչքս ինձ ծառայել կը մերժեն՝
Երբ որոնեմ հեռուներու խորհուրդներն .
Միտքըս եթէ զիս տանի բարձր ոլորտներ՝
Անօթութիւնն կը ստիպէ զիս խեղճօրէն
Իջնել զարձեալ գէպի այս նիւթն ոտնակոխ :

ԱՐՈՒՍԵԱԿ

Հըզօր է այս կապն՝ ինձմէ ալ աւելի :

Ա.Դ.ԱՄ

Ա՛հ, ոգի մ'ես, ուրեմն, շատ ապիկար,
Որ այս անտես ոստայնը գէմդ յանդգնի,
Այս ոչինչ բան, որու մասին մէկ քանի
Բարձր մտքեր ունին աղօտ դադափար,
Մինչ էակներ բիւրաւոր իր ցանցին մէջ
Կը տըւայտին ազատութեան պատրանքով :

ԱՐՈՒՍԵԱԿ

Եւ այս է լոկ որ կրնայ գէմս խիզախել,
Որովհետեւ ան ալ ինձ պէս ոգի է :
Կամ կը կարծես թէ ուժով չէ՞ անիկա,
Քանի թաքուն եւ անաղմուկ կը գործէ :
Մէկգլխի՝ պատրանքն : Ըստուերին մէջ կը մընայ
Որ կը գլորդէ եւ կը ստեղծէ աշխարհներ,
Զի լոկ տեսքն իր գլխապըտոյտ պիտի տար :
Լոկ գործն մարդուն, որ կեանք մ'ունի թըղաչափ,
Կը շողշողայ ու կ'աղմըկի բարձրագոյն :

Ա.Դ.ԱՄ

Վայրկեան մը թո՛ղ ակնարկ մը տալ այդ ուժին
Որ կը գործէ . — կուրծքըս, զիտես, ուժեղ է . —
Տեսնեմ ի՛նչպէս ազդել կրնայ իմ վըրսս,
Որ ինքնիրենս ամբողջ մըն եմ եւ անկախ :

ԱՐՈՒՍԵԱԿ

«Եմ» — յիմար խօսք : Դուն էիր եւ պիտ'ըլլաս :
Կեանքն է ըլլալ եւ ըստուիլ շարունակ :
Շուրջըդ նայէ՛, տե՛ս հոգեկան աչքերով :

Ա.Դ.ԱՄ

(Ինչ որ յաջորդաբար կ'ըսէ՝ բոլորն ալ տեսանիլի կը դառնան) :

Ի՞նչ է կոհակն այս որ չորս գիւս կը ցայտէ,
Շրջան կ'ընէ ձգտելով միշտ գէպի վեր ,

Ուր երկուքի բաժնուելով կը սուրայ
Մըրբիկի պէս գէպի բեւեռ :

ԱՐՈՒՍԵԱԿ

Ջերմութիւնն,
Որ սառերու աշխարհին կեանք կը տանի :

Ա.Դ.ԱՄ

Հապա այս զոյղ բոցի հոսանք որ քովէս
Կը սըրանայ շառաչիւնով մ'ահագիւն,
Ըստանալով քաշել տանիլ իրեն հետ :
Որուն սակայն կը զգամ ոյժն ալ կենսատու :
Ի՞նչ է, ի՞նչ է : Խեղացընոր կը մընամ :

ԱՐՈՒՍԵԱԿ

Մազնիսական զօրութիւնն է ասիկա :

Ա.Դ.ԱՄ

Կը տատանի երկիրն ամբողջ ոտքիս տակ,
Յարդ ինչ որ ես կը կարծէի հաստատուն,
Անկերպարան նիւթ է հիմա եռացող
Եւ անընկուն, որ կը ձգտի առնել ձեւ,
Ու կ'ողորի ըստանալու գոյութիւն .
Հոն՝ զերդ բիւրեղ, եւ այս տեղ ալ՝ զերդ բողբոջ :
Ի՞նչ պիտ'ըլլայ այս չըփօթին մէջ, աւա՛ղ,
Իմ պարփակուած անհատական էութիւնս,
Ի՞նչ պիտ'ըլլաս, ափսո՞ս, նաեւ մարմինդ իմ .
Դու, զոր գործիք մ'անխախտելի կարծեցի,
Որուն վըրայ ես խօլարար կը թնեցայ
Ծրագրերներուս ու տենչերուս մէջ մեծդի :
Դու չըփացած մանուկ, որ վիշտ ու հաճոյք
Ինձի համար միանգամայն կ'ընձեռես,
Պիտի փոխուիս քանի մը բուռ մըղեղի,
Մինչ էութեանդ մնացորդն անօտր օդ ու ջուր,
Որ քիչ առաջ դեռ կարմիր էր ու զըւարթ,
Գոյութեանս հետ ամպերու մէջ պիտ'ցնդի :
Ամէն մէկ խօսք եւ դադափար ուղեղիս՝
Էութենէս մէկ մէկ մասնիկ կը սպառէ :
Կը ճենճերի՛մ . — ու կըրակն այդ լափիկող
Խորհրդաւոր թերեւս ոգի մ'արծարծէ,
Որպէս զի իմ մոխրանալովս ջերմանայ :
Կը խենթեամբ հեռո՛ւ ինձմէ տեսիլներ .
Հարիւրաւոր տարրերու գէմ մաքառիլ
Թողլըքումի ըզդացումով ոգետանջ,
Ահաւո՛ր բան, ահաւո՛ր բան : — Ա՛խ, ինչո՞ւ

Հեռացուցի նախախնամող ձեռքն ինձմէ,
Բընաղղըս զոր թէեւ կը զգար, չըյարգեց,
Ու դիտութիւնս կը տենչայ, ո՛հ, բայց ի զուր:

Ե Ի Ա

Այո՛, այո՛, — նըման բան մ'ալ կը զգամ ես:
Գաղաններու դէմ ամենէի երբ կռուիս,
Կամ երբ ես խոնջ հող կը տանիմ պարտէղին,
Աչքըս կ'երթայ դէպի աշխարհն ընդարձակ,
Երկինք, երկիր պիտո՛ւ չըզտանեմ աղդական,
Ո՛չ բարեկամ, որ խրախուսէ, պաշտպանէ:
Ա՛խ, այսպէս չէր երբեմնի լաւ օրերուն:

ԱՐՈՒՍԵԱԿ (հեգնանքով)

Լա՛ւ, թէ ունիք հողի մ'այնքան փոքրողի,
Որ կը դողաք առանց խնամող ձեռքերու,
Եթէ այնքան պահանջ մ'է ձեզ ենթարկուիլ՝
Պիտի կոչեմ աստուած մը նոր ձեզ համար,
Խոթող ծերէն զեռ աւելի շնորհալի:
Երկրի ողին երիտասարդ եւ համեստ,
Ինծի ծանօթ խումբերու մէջ երկնային:

Երեւցի՛ր, ողի դու.
Չես կրնար ինձ հետեւ,
Լոկ դրժողն վաղեմի
Քեզ կոչել կը ժպտահի:

(Երկրէն բոցեր կը ցայտեն, սեւ ու քանձր ամպ մը կը ձեւանայ ծիածանով,
եւ գարիւրելի որոտումներով):

ԱՐՈՒՍԵԱԿ (ընկրկելով)

Ո՞վ ես, հըրէչ. ըզքեզ չէ որ կոչեցի,
Երկրի պաշտպան ողին հեզ է եւ տըկար:

ԵՐԿՐԻ ՈԳԻՒՆ ՁԱՅՆԸ

Որ խումբին մէջ երկնի տըկար կ'երեւի՝
Իր ծիրին մէջ անհուն է նա եւ հըղօր: —
Ահա հոս եմ, զի հնազանդիլ պէտք էի
Ողիին ես. միտքըդ սակայն լաւ պահէ՛,
Ուրիշ բան է կոչել, ուրիշ հրամայել:
Թէ իսկական դէմքըս ցոյց տամ՝ կ'ընկճուիս,
Եւ որդերն այս երկու կ'ըլլան բընաղղինջ:

ԵՐԿՐԻ ՈԳԻՒՆ ՁԱՅՆԸ

Ուրեմն, ըսէ՛, մարդը ի՞նչպէս մերձենայ
Քու վեհ անձիդ, թէ աստուածն իր ընտրէ քեզ:

Պիտի զտնէ ամպերու մէջ, ջուրի մէջ,
Անտառի մէջ, եւ ամէն տեղ ուր որ ինք
Հայեացք նետէ վեհ խորհուրդով, վառ տենչով:

(կ'աներեւութանայ):

(Պուրակն ու աղբիւրը կը լեցուին խաբուսիկ ու գուարք Ջրանոյշներով):

Ե Ի Ա

Ո՛հ, տե՛ս քընքուչ եղբայրական դէմքերն այս,
Նայէ՛, նայէ՛, որքան ժպտուն կ'ողջունեն.
Առանձնութիւնն ու տխրութիւնն հեռացան,
Մեր մէջ իջաւ երջանկութիւնն անոնց հետ:
Պիտ'ունենան խօսքն ըսփոփանք մեր ցաւին
Եւ վարանման ժամանակ՝ լաւ խորհուրդներ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Դուք որ հարցին պատասխանն ալ կ'որոշէք,
Այս թըրլըռուն պարմաններէն լաւադոյն
Խորհըրդական չէիք կրնար ալ զտնել,
Որ պատասխան կու տան հարցին համեմատ.
Ջինջ սրտերուն ծիծաղադէմ կը նային:
Յուսահատին իրրեւ ճիւղով մ'ահարկու.
Մինչեւ վախճան պիտի ձեզի ընկերեն
Իկըր ձեւերով եւ հաղար կերպ փոխելով,
Շուք հովասուն իմաստունին խուզարկու,
Եւ տեսլական երիտասարդ սրտերուն:

ԱԳԱՄ

Ի՞նչ է շողիւնն առջեւ անցնող այս խաղին,
Ես չեմ կրնար խորհուրդին մէջ թափանցել.
Ինձ համար նոր առեղծուած մ'է լուծելիք:
Ալ մի՛ խորեր, Արուսեակ, զիս աւելի,
Թող ամէն բան զխոնամ, ինչպէս խոստացար:

ԱՐՈՒՍԵԱԿ (մեկուսի)

Օր մը շատ դառն պիտ'ըլլայ այս դիտութիւնդ,
Տըղիտութեան պիտի ցանկաս դու նորէն:

(բարձրաձայն)

Համբերէ՛ զեռ: Դու գիտես թէ պայքարով
Պէտք է շահիս մէկ բողբէի հաճոյքն ալ.
Երկարօրէն պէտք է ընես վարժութիւն,

Շատ անգամներ սրբալիներու մէջ իյնաւ,
Մինչեւ հասնիս ըմբռնելու ամէն բան:

Ա.Գ.Ա.Մ

Հեշտ է քեզի համբերութիւն քարոզել,
Յաւերժութիւն մ'ունիս առջեւը բացուած,
Սակայն կեանքի ծառէն եւ չեմ ճաշակած,
Զիս թրղաչափ կեանքըս փութալ կը ստիպէ:

Ա.ՐՈՒՍԵԱԿ

Ամէն ապրող երկար կ'ապրի հաւատար,
Դարաւոր ծառն, ու ճըճին ալ միօրեայ,
Գիտակցութիւն, սէր, խինդ ունի, կը մեռնի,
Յետ իր օրուան եւ իղձերու կատարման:
Մե'նք կը փոխուինք, ոչ թէ կ'անցնի ժամանակն,
Մէկ դար, մէկ օր, մի եւ նոյն բան են դրեթէ:
Նըպատակիդ պիտի հասնիս, մի՛ վախնար.
Բայց մի՛ կարծեր թէ մարմնիդ մէջ հողեղէն
Փակուած է լսի անձնաւորութիւն մարդուն:
Նըկատած եւս դու մըջիւններն, մեղուններն,
Հաղար բանուոր կ'երթան կու գան խօլարար,
Ու խառն ի խառն եւ կուրօրէն կը դործեն,
Կը մոլորին, կը սրբալին ու կ'իյնան.
Ամբողջութիւնն իրբեւ անհատ մը, սակայն,
Յաւալ կ'ապրի, եւ միարան կը դործէ,
Կը կատարէ նախադրուած ծրարելին,
Մինչեւ որ դայ վերջն ու համայնքը դադրի: —
Ասոր պէս հող պիտի մարմնիդ ալ լուծուի,
Բայց վերապրի պիտի հարիւր կերպերով,
Հարկ չըկայ ալ բան մը ծայրէն ըսկըսիլ.
Թէ մեղանչես՝ պիտի քաւես զաւկիդ մէջ,
Եւ իրեն մէջ շարունակես պիտ' ախտերդ.
Ինչ որ փորձես, ինչ որ ըզգաս ու սորվիս՝
Պիտի մընաս դուն տէրն անոր՝ բիւր դարեր:

Ա.Գ.Ա.Մ

Ալեւորին ակնարկն է սա յետադարձ,
Բայց մատաղ կուրծքս ունի ուրիշ տենչ մ'ալրող.
Ակնարկ մը տալ ապագային: Թո՛ղ տեսնեմ
Ինչո՞ւ համար կը սրայքարիմ, ի՞նչ պիտ' կրեմ:

Ե Ի Ա

Տեսնեմ եւ ալ, այս փոփոխմամբ ըլլալիւրդ
Գեղիս հըմայքն չի՞ նուաղիր, չի՞ խամբիր:

Ա.ՐՈՒՍԵԱԿ

Ա՛յդպէս ըլլայ: Հըմայք մը ձեզ պիտ' ընեմ,
Եւ ապագան պիտի տեսնէք մինչեւ վերջ՝
Պատկերներու տակ խուսափուել երազի.
Բայց երբ տեսնէք սրբան դուր է նըպատակն,
Որքան ծանր է պայքարը ձեր ուղիին,
Որպէս զի ձեզ վըհատութիւն չըտիրէ՝
Ու չըփախչիք պատերազմի ճակատէն,
Պիտի կախեմ շող մը մեղմ իր երկընքին,
Որ գիտնաք թէ երեւոյթ են խարուսիկ
Այդ անուրջներն, — եւ յոյսն է այս ճառագայթ:

(Մինչ այս կ'առաջնորդէ Ադամն ու Եւան խրոխտին մէջ ուր անոնք կը նիւնեն):

Հունգար բնագրէն
Բարգմանեց
Հ. Ա. Ֆ.



ՆՈՃԻՆԵՐՈՒ ԺԱՄԲԱՆ

Նոնիներուն մամբան հանդարտ կը փալէ,
Հին օրերու ինչպէս լըռին իմաստուն.
Թանձր ըստուերներ, լայն վերաբիւ ուսերուն,
Որոնց ներքեւ մուրն անասիման խորհուրդ է:

Կ'երկարի մա կապոյտներու մէջ երկու.
Լին կայ ասդին, անդին սահմանն աշխարհի,
Զայն կ'եզերեն հարիւր նոնի կողմ կողմի,
Հարիւր սիւներ՝ երկինքը վեր բըռնելու:

Քայլեր կ'անցնին դարերու հին հետքերէն,
Նոյն միտքն է որ հողին վըրայ կը կարդայ,
Կեանքի խորհուրդն եւ մարդուն սիրտն հընամեայ,
Եւ մատեաններ իջած հեռու երկինքէն:

Վանականներ հոն կը շրջին միս միմակ,
Մեծ յոյսերու եւ հաւատքի հետ ընկեր.
Անոնց համար չըկայ երազ եւ ըստուեր,
Պարուրելու կեանքը խաբող ֆողի տակ: